ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔ

ք. Ջերմուկ **16/հունիսի/2025 թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու ...9... անդամներ:

Բացակա էին՝ Միհրան Հովհաննիսյանը, Ձիրայր Բարսեղյանը, Արիկսի Մնացականյանը, Լևոնտաշ Լևոնյանը և Ավետ Հովսեփյանը:

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u> համայնքիղ ղեկավարի տեղակալ Աշոտ Խաչատրյանը, Գնդեվազ գյուղի վարչական ղեկավար Սևակ Մկրտչյանը, Կեչուտ գյուղի վարչական ղեկավար Արտակ Բագրատյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Կարեն Գեվորգյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Արմինե Ղազարյանը

<u>Նիստը վարում էր Ջերմուկ համայնքի ղեկավար Վահագն Արսենյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Գոհար Թադևոսյանը</u>

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՎԵՐՋԻՆ՝ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի վերջին՝ 2025 թվականի հունիսի 16-ի նիստի հետևյալ *օրակարգը*՝

1.1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 4-րդ փողոցի N 10 հասցեում գտնվող հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.2. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի 1-ին փողոցի 4-րդ նրբանցքի N 1 հասցեում գտնվող հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.3. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական տարածքում գտնվող 10-016-0201-0112 և 10-016-0201-0102 կադաստրային ծածկագրերով հողամասերը համայնքի սեփականություն ճանաչելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը օտարելու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. Ջերմուկ համայնքում սոցիալական աջակցության բնագավառի խնդիրները լուծելու նպատակով համայնքի ղեկավարի լիազորությունները պատվիրակելու համաձայնություն տալու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Ա. Ղազարյան

1.6. Ջերմուկ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է նտնում ստորագրման պահից:

Կողմ----------9 *Դեմ*----------0 *Ձեռնպահ*----------0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետին համապատասխան, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի

ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման հավելված N 2-ի 39-րդ կետի 1-ին ենթակետը՝

1. Հաշվի առնելով, որ Գնդեվազ գյուղի 4-րդ փողոցի N 10 հասցեում գտնվող բնակելի նշանակության անշարժ գույքը՝ 63,84 քմ մակերեսով բնակելի տան, 110,4 քմ մակերես ունեցող բնակավայրերի նշանակության սպասարկման հողամասի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր, և կադաստրային քարտեզում այն սխալմամբ ներկայացված է որպես քաղաքացիների անվամբ հաշվառված գույք՝ առկա անճշտությունն ուղղելու նպատակով նշված գույքը ճանաչել որպես Ջերմուկ համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ----------8---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------1----------

Ավետիսյան Ա.

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ N 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետին համապատասխան, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման հավելված N 2-ի 39-րդ կետի 1-ին ենթակետը՝

1. Հաշվի առնելով, որ Կեչուտ գյուղի 1-ին փողոցի 4-րդ նրբանցքի N 1 հասցեում գտնվող բնակելի նշանակության անշարժ գույքը՝ 168,1 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան՝ 1000 քմ մակերես ունեցող բնակավայրերի նշանակության սպասարկման հողամասի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր, և կադաստրային քարտեզում այն սխալմամբ ներկայացված է որպես քաղաքացիների անվամբ հաշվառված գույք՝ առկա անճշտությունն ուղղելու նպատակով նշված գույքը ճանաչել որպես Ջերմուկ համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ----------8---------- Դեմ----------0---------- Ձեռնպահ----------1----------

Ավետիսյան Ա.

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 48-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 10-016-0201-0112 ԵՎ 10-016-0201-0102 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետին համապատասխան, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» 698-Ն որոշման հավելված N 2-ի 39-րդ կետի 1-ին ենթակետը՝

1. Հաշվի առնելով, որ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի վարչական տարածքում գտնվող 10-016-0201-0112 և 10-016-0201-0102 կադաստրային ծածկագրերով, համապատասխանաբար՝ 0,77781 հա և 0,6041 հա մակերեսներով գյուղատնտեսական նշանակության հողամասերի (հողատեսքը՝ վարելահող) նկատմամբ գոյություն չունեն իրավունքի ձեռքբերումը հաստատող փաստաթղթեր, և կադաստրային քարտեզում դրանք սխալմամբ ներկայացված են որպես քաղաքացու անվամբ հաշվառված հողամասեր՝ առկա անճշտությունն ուղղելու նպատակով նշված հողամասերը ճանաչել որպես Ջերմուկ համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Կողմ----9---- *Դեմ*----0---- *Ձեռնպահ*----0----

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 49-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

1. Համաձայնվել Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հետևյալ հողամասերը աճուրդով օտարելու մասին Ջերմուկ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով յուրաքանչյուր հողամասի օտարման նպատակը և մեկնարկային գինը համաձայն աղյուսակի՝

հողամասի օտարման նպատակը	հողամասի գտնվելու վայրը	մակերեսը հա	մեկնարկային գինը, դրամ	հողամասի ծածկագիրը	նպատակային նշանակությունը	գործառնական նշանակություն կամ հողատեսքը
գյուղատնտեսական գործունեության համար	գյուղ Գնդեվազ	0,02416	15 000	10-016-0235-0002	գյուղատնտեսական	վարելահող
գյուղատնտեսական գործունեության համար	գյուղ . Գնդեվազ	0,016635	15 000	10-016-0235-0003	գյուղատնտեսական	վարելահող
բնակելի կառուցապատման համար	ք. Ջերմուկ, Գարնանային փողոց N 2	0.0108	315000	10-002-0038-0196	բնակավայրերի	բնակելի կառուցապատման
հասարակական կառուցապատման համար	ք. Ջերմուկ, Ազատամարտիկների փողոց N 17/2	0,07	2025000	10-002-0032-	բնակավայրերի	հասարակական կառուցապատման

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------8---------- *Դեմ*----------1---------- *Ձեռնպահ*----------0----------

Ավագյան Ա.

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՏՎԻՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասով, հիմք ընդունելով 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, 48-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների, ինչպես նաև Ջերմուկ համայնքի 2025-2026 թվականների Համայնքային սոցիալական ծրագրի գործողությունների կատարումն ապահովելու նպատակով՝

1. Ջերմուկ համայնքում սոցիալական աջակցության բնագավառի խնդիրները լուծելու նպատակով համայնքի ղեկավարի լիազորությունների կատարումը պատվիրակել ՀՀ օրենսդրությանը համապատասխան գնման ընթացակարգով հաղթող ճանաչվող կազմակերպությանը (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Կազմակերպությունը Ջերմուկի համայնքի վաչական տարածքում սոցիալական աջակցության բնագավառի խնդիրները լուծելու հետ կապված հարաբերությունները պետք է կարգավորի Ջերմուկի համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 27-ի N 45-Լ որոշմամբ հաստատված Ջերմուկ համայնքի 2025-2026 թվականների Համայնքային սոցիալական ծրագրին համապատասխան:

3. Կազմակերպությունը պարտավոր է համայնքի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվության հետ համայնքի ավագանուն ներկայացնել հաշվետու տարում Համայնքային սոցիալական ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը, որը ենթակա է հրապարակման՝ օրենքով սահմանված կարգով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ----------9---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա/

ԼՍԵՑԻՆ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ՁԵԿ. ԳՈՀԱՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

1. Ջերմուկ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր և ժամ սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 18-ին, ժամը՝ 15.00-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ----------9---------- *Դեմ*----------0---------- *Ձեռնպահ*----------0----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն, հայրանուն	ստորագրություն
Արսենյան Վահագն Աշոտի	
Սարգսյան Վարդան Ռաֆիկի	
Սարգսյան Լուսիկ Ժորայի	
Վարդազարյան Աննա Վասակի	
Խաչատրյան Գոհար Բաբկենի	
Համբարձումյան Մխիթար Սամվելի	բացակա
Այվազյան Մխիթար Վոլոդյայի	
Մկրտչյան Մարինե Մայիսի	
Բաբայան Ժիրայր Ժորայի	բացակա
Մնացականյան Արկադի Ալբերտի	բացակա
Գևորգյան Մանան Աղվանի	
Վահանյան Վարուժան Կնյազի	բացակա
Հովակիմյան Ազատ Հայրիկի	բացակա
Ավետիսյան Սյուզաննա Թաթուլի	

Ջերմուկ համայնքի ղեկավար՝

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Գոհար Թադևոսյանը _____